Հավելված N 446
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

## 1.Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) անասնաբուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) ձկնաբուծության և մեղվաբուծության բաժնի պետ (ծածկագիրը՝ 23-32.15-Ղ4-3)

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Վարչության բաժնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. **Ենթակա և հաշվետու պաշտոններ**

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

**1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ Վարչության պետը:

**1.5. Աշխատավայրը**

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

- ապահովում է ձկնաբուծության և մեղվաբուծության իրավիճակի վերլուծությունների իրականացման, խնդիրների վերհանման, գնահատման ու կանխատեսումների իրականացման, դրանց արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացման, զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մշակման և իրականացման ընթացքի ուսումնասիրման աշխատանքների կատարումը,
- ապահովում է վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների աշխատանքների իրականացումը,
- ապահովում է ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության տրամադրման աշխատանքների իրականացումը,
- ապահովում է ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտներին աջակցության ծրագրերի մշակման և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրման աշխատանքների իրականացումը,
- ապահովում է ձկնաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքների իրականացումը.
- ապահովում է հանրապետությունում անասնաբուծական մթերքների և ձկան արտադրության ծավալների կանխատեսման, փաստացի տվյալների վերլուծման

աշխատանքների իրականացումը,

- ապահովում է ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտների ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման և մշակման նպատակով ուղեցույցների կազմման և մեթոդական աջակցության տրամադրման, դիտանցումներին մասնակցելու աշխատանքների իրականացումը,
- ապահովում է այլ գերատեսչությունների կողմից մշակված ձկնաբուծության և մեղվաբուծության բնագավառներին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրման աշխատանքների իրականացումը:

**Իրավունքները՝**

- տեղական ինքնակառավարման մարմիններից, շահագրգիռ այլ մարմիններից ստանալ տեղեկատվություն ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտների իրավիճակի վերաբերյալ,
- ստանալ առաջարկություններ կամ կարծիքներ Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման համար,
- ստանալ առաջարկություններ կամ կարծիքներ՝ ձկնաբուծական և մեղվաբուծական արտադրանքի վերամշակման համար անհրաժեշտ արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտներին աջակցության ծրագրերի, դրանց ընթացքի ու արդյուանվետության վերաբերյալ,
- ստանալ առաջարկություններ ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներից՝ ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող, ինչպես նաև վերամշակման, պահածոյացման համար առավել նպատակահարմար (հարմարեցված) ձկան, խեցգետնի, փափկամորթների բուծման, մեղվաբուծական արտադրանքի արտադրության կազմակերպման և նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների մասին,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումներից և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարողներից ստանալ առաջարկություններ ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակման և իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ,
- տեղական ինքնակառավարման մարմիններից, ՀՀ վիճակագրական կոմիտեից ստանալ տեղեկատվություն ձկնաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսությունների համապատասխան թվաքանակի կամ այլ տվյալների վերաբերյալ.
- տեղական ինքնակառավարման մարմիններից, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից ստանալ հանրապետությունում ձկան արտադրության ծավալների վերաբերյալ փաստացի տվյալներ,
- այլ գերատեսչություններից ստանալ իրենց կողմից մշակված ձկնաբուծության և մեղվաբուծության բնագավառներին առնչվող իրավական ակտերը, ծրագրերը, հայեցակարգերը, տեխնիկական կանոնակարգերը և ստանդարտների նախագծերը,
- համագործակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարողների հետ, հրավիրել քննարկումներ, խորհրդակցություններ,

- մասնակցել տեղական և արտասահմանյան պետական մարմիններում և կազմակերպություններում ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներին վերաբերող հարցերի քննարկմանը:

**Պարտականությունները՝**

- հետևել ձկնաբուծության և մեղվաբուծության ընդհանուր իրավիճակի վերլուծման, գնահատման ու կանխատեսման, ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մշակման աշխատանքների ընթացքը, արդյունքների հիման վրա ներկայացնել առաջարկություններ,
- ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ուսումնասիրման հիման վրա ներկայացնել առաջարկություններ համապատասխան աջակցության տրամադրման համար.
- հետևել ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտներին աջակցության ծրագրերի մշակման աշխատանքներին, վերահսկել իրականացվող ծրագրերի ընթացքը,
- տրամադրել խորհրդատվություն ձկնաբուծական և մեղվաբուծական արտադրանքի վերամշակման համար անհրաժեշտ արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտներին աջակցության ծրագրերի, դրանց ընթացքի ու արդյուանվետության վերաբերյալ,
- տրամադրել խորհրդատվություն ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին՝ ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող, ինչպես նաև վերամշակման, պահածոյացման համար առավել նպատակահարմար (հարմարեցված) ձկան, խեցգետնի, փափկամորթների բուծման, մեղվաբուծական արտադրանքի արտադրության կազմակերպման և նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների մասին,
- ստուգել հանրապետությունում ձկան արտադրության ծավալների վերաբերյալ փաստացի տվյալների ամփոփման և կանխատեսումների արդյունքները, եռամսյակային պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե ներկայացնել տեղեկագրերը,
- հետևել ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտների ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար ուղեցույցների կազմման, մեթոդական աջակցության տրամադրման աշխատանքներին, մասնակցել ընթացիկ դիտանցումներին,
- ուսումնասիրել այլ գերատեսչությունների կողմից մշակված ձկնաբուծության և մեղվաբուծության բնագավառներին առնչվող իրավական ակտերը, ծրագրերը, հայեցակարգերը, տեխնիկական կանոնակարգերն ու ստանդարտների նախագծերը, հանդես գալ առաջարկություններով կամ կարծիքներով:
-

**3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

**3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

| | | | |
|---|---|---|---|
| 1 | **Ուղղություն** | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն | |
| 2 | **Ոլորտ** | Գյուղատնտեսական գիտություններ | Անասնաբուժություն |
| 3 | **Ենթաոլորտ** | Ագրոնոմիա և | Անասնաբուժություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | անասնաբուծություն | |
| 4 | **Մասնագիտություն** | Անասնաբուծություն | Անանսնաբուժություն |

**3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն**

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրատում

**4.Կազմակերպական շրջանակ**

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: